Լ. Ս. ԽԱՉԻԿՅԱՆ

Վախճանվեց Հայկական ՍՍՀ գիտությունների ակադեմիայի ակադեմիկոս, պատմական գիտությունների դոկտոր, պրոֆեսոր Լևոն Խաչիկյանը, երբ դեռ չէր բոլորել կյանքի 64-րդ տարին։

Լ. Խաչիկյանը ծնվել է Երևանում 1918 թ., ավարտել է Երևանի պետական համալսարանը։ Դեպես 1940-ական թթ. նա դարձավ հայ դասական բանասիրության առաջին հետևողական ավանդակիրներից մեկը։

Լինելով լայն ընդգրկման տեր, Լ. Խաչիկյանը ամենից առաջ աղբյուրագետ պատմաբան էր։ Պատմությունը իբրև գիտություն հենվում է վստահելի և ստուգված փաստերի, պատմագրական աղբյուրների վրա, և Խաչիկյանը մեծ ջանքեր ներդրեց այդ ուղղությամբ՝ հին ձեռագրերից և արխիվային նյութերից պեղելով ու հրապարակ բերելով հայ ժողովրդի քաղաքական, տնտեսական և հոգևոր կյանքին վերաբերող կարևոր տվյալներ։

Հայ պատմագրությունը հարուստ աղբյուր է ոչ միայն սեփական, այլև հարևան ժողովուրդների պատմության համար, բայց հիմնականում այն ընդգրկում է կամ արտացոլում երկրի քաղաքական կյանքը։ Իսկ ժողովրդի ներքին կյանքը, նրա սոցիալական հարաբերությունները վրիպել կամ դրեթե վրիպել են պատմիչների ուշադրությունից, ավելի ճիշտ՝ այդպիսի խնդիր նրանք չեն ունեցել։ Խաչիկյանը ուշադրություն դարձրեց մատենագրական այնպիսի շերտերի վրա, որոնք կարծես երկրորդային են, չեն առնչվում պատմագրական ժանրի հետ, բայց ժողովրդի կյանքի, սովորությունների, կենցաղի, սոցիալական հարաբերությունների մասին թանկարժեք նյութեր են պարունակում։ Այդպես նրա կողմից վերահմաստավորվեցին միջնադարյան թղթերը, ճառերը, քարողները, հարց և պատասխանիք ու եկան լրացնելու պատմագրության թերին։

Ընդհանրապես ավելի արժեքավոր են այն բնագրերը, որոնք հասել են առաջին ձեռքից, առանց միջնորդման և գրչագրական ճանապարհ անցնելու։ Այդ իմաստով առաջնակարգ նշանակություն ունեն գրիչների հիշատակարանները, որոնք նույնքան ուղղակի են և նույնքան անմիջական, որքան վիմագիր արձանագրությունները։ Մեծ է հիշատակարանների աղբյուրագիտական արժեքը, բայց դրանք ցրիվ էին, ձեռագրերի մեջ կորած և մնում էին անօգտագործելի։ Առաջներում հիշատակարաններ հավաքելու և հրատարակելու ուղղությամբ քիչ բան չի արվել, բայց Խաչիկյանն այդ գործը բարձրացրեց գիտական նոր աստիճանի՝ մշակելով հիշատակարանների հրատարակման հա-

տուկ սկզբունքներ։ Նրա ջանքերով հրապարակ եկան XIV—XV դդ. հիշատակարանների ստվար հատորներ, և այդ գործը շարունակվեց այլ աղբյուրագետ գիտնականների կողմից։

Երկրի տնտեսական կյանքը պատմության առանցքային խնդիրներից է։ Նրանով է արտահայտվում հասարակության զարգացման պատկերը։ Լ. Խաչիկյանը չթուլացող եռանդով հետևեց այդ անտեսված բնագավառին։ Նրա հրապարակումները մեծ արժեք ունեն հայ տնտեսության և տնտեսագիտական մտքի պատմության համար։

Լ. Խաչիկյանը միայն բնագրագետ-աղբյուրագետ չէր, որ ինքնին արդեն երախտիք է բերում, նա նաև լայն ընդգրկման տեր միջնադարագետ պատմաբան էր, որի պատմագիտական աշխատանքներին բնորոշ են շարադրանքի հագեցվածությունը և հստակ տրամաբանականությունը։ Նա իր իսկ հրատարակած հիշատակարանների նյութի հիման վրա

շարադրեց XIV—XV դդ. Հայաստանի պատմությունը և լրացրեց բաց մնացած բազմաթիվ սպիտակ էջեր։ Խաչիկյանի «Սյունյաց Օրբելյանների Բուրթելյան ճյուղը», «Զորանյանների և Զելաիրյանների տիրապետությունը Հայաստանում» և այլ աշխատություններ փաստագրական նյութի մշակման օրինակ կարող են լինել։

1954 թ. մինչև իր կյանքի վերջը, շուրջ երեք տասնամյակ, Լ. Խաչիկյանը գլխավորում էր Մատենադարանի կոլեկտիվը իբրև դիրեկտոր։ Այդ ընթացքում Մատենադարանը վերածվեց հին ձեռագրերի ուսումնասիրման գիտահետազոտական ինստիտուտի և դարձավ միջազգային ճանաչում ունեցող հայագիտական կենտրոն։ Շատ հաջողություններ, որ այդ տարիներին ձեռք են բերվել Մաշտոցի անվան Մատենադարանում, կապված են նրա անվան հետ։

Ձեռագրական հարստությունը համամասնորեն վեր հանելու և սերունդներին մատուցելու համար Խաչիկյանը ուշադրություն դարձրեց ոչ միայն միջնադարյան ժառանգության հայտնի ճյուղերի վրա, այլև նրանց, որ ավելի քիչ են ուսումնասիրված։ Նրա նախաձեռնությամբ Մատենադարանում բացվեց միջնադարյան գիտության պատմության բաժինը, որտեղ Լ. Խաչիկյանի գիտական ղեկավարությամբ աճեցին և անհրաժեշտ փորձ ձեռք բերեցին շատ մասնագիտական կադրեր։

Խաչիկյանը մասնակցել է մի շարք կարևոր հայագիտական ձեռնարկումների։ Նա հետևում էր Հայկական հանրագիտարանի պատմագիտական նյութերին, խմբագիրն էր հայ ժողովրդի պատմության բազմահատորյակի ակադեմիական հրատարակության 4-րդ հատորի և որոշ գլուխների հեղինակ, նրա խմբագրությամբ էին հրատարակվում «Բանբեր Մատենադարանի» գիտական նյութերի ժողովածուի համարները։

Լ. Խաչիկյանն իր ամբողջ կարողությամբ ծառայեց հայրենի գիտությանը, իր ժողովրդին և արժանին ստացավ նրանից։ Նա Հայկական ՍՍՀ գիտության վաստակավոր գործիչ էր, Մաշտոցյան մրցանակի առաջին դափնեկիրը, ժողովուրդների բարեկամության շքանշանակիր։

Իբրև ստեղծագործող, իբրև քաղաքացի Լ. Խաչիկյանը ապրեց հարուստ և արգասաբեր կյանքով ու նվիրվածությամբ հայրենի երկրին և հայրենի գիտությանը։

Ա. ՄԱՐՏԻՐՈՍՅԱՆ